

23436

ՊՐՈՊՐԱԿՑԵՎԻ ՀԱՄԱՐ

ԿԱՌՈՒՑՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

ՅԵԿ

ԱՅՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Զրուցներ բանվորների հետ)

331.2

Դ-40

ՀՐԱՄԱՐԻ ՊԻՄԱԿԱԿ

ԿԱՌՈՒՑՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌՈՒՑՈՂԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

1979

24 AUG 2013

15 JAN 2010

ՀԱՐԱՄԻԹԵՆԾԿԵՆ ԿՐԹՈՒՑՈՂ ԲՈՆՎԱՐՆԵՐԻ  
ՔՐՅԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

331.2  
Բ-40

ԿԱՌՈՒՑՈՂԻ ԱՅԽԱՏԱՎԱՐՉՈՅ ՅԵՎ ԱՅՆ  
ԲԱՐՁՐԱՑՄԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

(Զրուցյաներ բանվորների հետ)

124

Կազմեց Ա. Բ Ե Ց Ն Բ Ե Բ Գ  
ՀԿԲԱՄ ԿԿ-ի Կուլտոբաժնի խմբագրութեամբ

1004  
30678

Թհմատիկ խմբակների  
աշխատանքի ծրադի  
և սյութեր



ՀՀԱ.ՏԱ.ԲՈ.ԿՈՒ.ԹՅԱՆ.Դ.

ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿԵՆՏՎԱՐՈՒԹՅԱՆ

Զրույց առաջին

Կառուցող բանվորների աշխատավարձը  
և ինչից կախում ունի այն.

Զրույցի նպատակը

Զրույցի նպատակն է խմբակայիններին պարզ հասկացողություն տալ կառուցող բանվորի աշխատավարձի մակարդակի մասին՝ ժամանակի և ուրիշ պրոֆեսիաների համեմատությամբ, առանձնապես ընդգծելով կառուցողների աշխատավարձի վերջին տարիների աճման փաստը:

Այնուհետև խմբակայինների առաջ պիտի պարզվի թե աշխատավարձը ինչ կախում ունի վորակավորումից, սեղոնային տատանումներից, աշխատանքի վարձատրության սխտեմից և այլն: Մանրամասն պետք է կանգ առնել պարզելու համար բանվորների գործարքային աշխատավարձի կազմությունը, տարիի Փայտի գործարքային աշխատավարձի կազմությունը, ուրիշ նրանում և ոժանդակ ուղղութարքային բանվորների աշխատավարձի փոխհարաբերությունները:

Յելնելով դրանից, անհրաժեշտ է խմբակայինների համար պարզել Միության տարիի Փայտի քաղաքականությունը

ՀԱՅՈՒՆԵԳՐԱՖԻ Ի ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 798
ԳՐԱՌԵՊԱՐԱԿԱՐ 1477 թ.
ՏԻՐԱԺ 1000.

աշխատավարձի կանոնավորման ասպարեզում և այդ կանոնավորումն ուժեղացնելու համար անցկացվող տարիֆային ռեփորթը:

Տարիֆային ռեփորթ անցկացնելու հարցը պետք է այնպիս մանրակրկիտ կերպով լուսաբանվի, վորավեսպի յուրաքանչյուր խմբակայինի համար պարզ լինի, փոքր ռեփորթի կիրառումը վոչ մի գեպքում չպետք է առաջ բերի աշխատավարձի Փոնդի հավելում, այլ նպատակ ունի սահմանելու առանձին պրոֆեսիաների և կատեգորիաների բանկորների աշխատանքի վարձարության ավելի նորմայ փոխհարաբերություններ:

Անհրաժեշտ է բացատրել նաև ռեփորթ անցկացնելու տեխնիկան՝ նոր տարիֆային տեղեկատու, ցանց, 1-ին կարգի դրույքի սահմանում, արտադրության նորմաների վերանայում, վարչության ձեռք առած միջոցները, վորավեսպի նորմաների վերանայումը՝ նորմաները բարձրացնելու ուղղությամբ՝ աշխատավարձի ամբողջական նվազում առաջ շրերի և այլն:

Վորավես յեզրափակում այս զրույցի, անհրաժեշտ է խմբակայինների առաջ պարզաբանել այն լրացուցիչ վճարումնե-

րը և յեղած արտօնությունները, վորոնք բարձրացնում են բանվորի աշխատավարձը և վորոնք նախապատերազմյան ժամանակ չկային: Առանձնապես պետք է կանգ առնել բանվորների ապահովագրության (վարձողի հաշվին), արձակուրդների, լուծարքային նպաստների, բնակարաններ հատկացնելու և արտհագուստայում վրա:

Ընդհանուր առմամբ, զրույցի արդյունքը պետք է լինի այն, վորավեսպի նոմեն մի խմբակային կարողանա ձիշտ կերպով յուրացնել, թե բանվորը իր աշխատանքի վոխարեն վարձողից ի՞նչ և ստանում է ինչից կախում ունի կառուցող բանվորի աշխատավարձի մակարդակը:

### ԶԲՈՒՑՅԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Վորքա՞ն և վաստակում կառուցողը ԽՍՀՄ-ում և ինչպես և ազգում դա կառուցումների արժեքի վրա:

2. Ինչից կախում ունի կառուցող բանվորների աշխատավարձի մակարդակը:

3. Միության տարիֆային քաղաքականությունը և տարիֆային ռեփորթ անցկացնելը:

4. Ի՞նչ ե ստանում կառուցողը  
ԽՍՀՄ-ում վորպիս լրացում իր տշխա-  
տավարձի:

### ԶՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆ- ԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վորքա՞ն ե վաստակում կառուցողը  
ԽՍՀՄ-ում և ինչպե՞ս է ազդում դա կա-  
ռուցումների վրա:

Մեր միության ԿԿ-ի և Կենտրոնական  
Վիճակագրական Վարչության վիճակա-  
գրական տվյալների հիման վրա, կառու-  
ցողների վարձատրությունը, ըստ բոլոր  
պրոֆեսիաների՝ 1927 թ. կազմում եր մի-  
ջին հաշվով որեկան 3 ո. 17 կոպեկ, 1926  
թվի 9 ամիսների 3 ո. 05 կոպ. դիմաց:

Այդպիսով կառուցողների միջին աշ-  
խատավարձը մեկ տարում՝ այդ տվյալ-  
ների հիման վրա՝ բարձրացել է մոտ 4%,  
իսկ առանձին ամիսներում՝ 5-8%:

Կառուցողների աշխատավարձը զե-  
րազանցում է արտադրության միջին աշ-  
խատավարձից, սակայն առաջին տեղը չի  
գրավում: Նայած տարվա յեղանակին,  
կառուցողները՝ համաձայն աշխատավար-  
ձի՝ գրավում են 4 մինչև 8-րդ տեղը: Մի-  
ջին հաշվով 1297 թվին կառուցողները

գրավում եյին 4-րդ տեղը՝ կոմունալներ-  
ներից, տպագրիչներից և կաշեղործներից  
հետո:

Կառուցումների արժեքի մեջ կառու-  
ցողների աշխատավարձը զանազան մեծու-  
թյուն և կազմում, նայած կառուցման տե-  
սակին (բնակելի, արդյունագործական,  
փոխադրական) և աշխատանքի բնույ-  
թին (նոր կառուցումներ, վերանորոգում-  
ներ):

Վորչափ գերակշռում ե ձեռքի աշխա-  
տանքը (որինակ, հողային աշխատանքնե-  
րը ճանապարհների կառուցումներում) և  
վորչափ քիչ նյութեղեն և գործադրվում  
(վերանորոգչական աշխատանքներում),  
այնչափ բարձր և աշխատավարձի բաժի-  
նը կառուցումների արժեքում:

Մեր միության ԿԿ-ի համահավաք  
ավյաններում աշխատավարձը կազմում և  
կառուցման ամբողջ ծախսերի՝ նոր բնա-  
կարանային և արդյունագործական շինա-  
րաբության մեջ 18 մինչև 23%, ճանա-  
պարհների շինաբարության մեջ 30%-ից  
ավելի, վերանորոգչական աշխատանքնե-  
րում աշխատավարձի բաժինը հասնում է  
կառուցման ամբողջ արժեքի 50%-ից 60 տո-  
կուին:

Կառուցողների աշխատավարձը ներկայումս համապատասխանում է նախապատերազմյան մակարդակին:

Կառուցող բանվորը այժմ վաստակում է միջին հաշվով չերլոնյան ուուրլիներով համարյա յերկու անգամ ավելի նախապատերազմյան ժամանակից: Մթերքների և գործածական առարկաների արժեքը ևս նախապատերազմյանի համեմատությամբ թանգացել է համարյա յերկու անգամ: Այսպիսով կարելի յէ համարել, վոր կառուցողի վաստակն այժմ, իր գնողական ընդունակությամբ, մոտ է նախապատերազմյան վաստակին:

2. Ինչից կախում ունի կառուցող բանվորների աշխատավարձի մակարդակը:

Կառուցող բանվորների առանձին խմբակների աշխատավարձի մակարդակը կախված է նախ և առաջ նրանց վորակավորումից: Այդ նրանից ե, վոր վորակավորում ձեռք բերելու համար բանվորը վորոշ ժամանակ և դրամ է ծախսուել: Բացի դրանից, վորակավոր բանվորը ավելի դրագեւու է, տեխնիկապես ավելի յէ պատրաստված և այլն, վոր ավելացնում է նրա պահանջները:

1927 թ. մեր միության բոլոր բանվորների որական 3 ո. 17 կոպեկ միջին աշխատավարձի պայմաններում պահանգաղործները (արժատուրչչիկ) վաստակել են որական 4 ո. 81 կոպեկ, ծեփագործները՝ 4 ո. 95 կոպ., ներկարարները՝ 3 ո. 48 կոպ., հողափորները՝ 3 ո. 15 կոպ., իսկ սեւաղործները՝ ընդամենը 2 ուուրլի:

Բացի դրանից, աշխատավարձի մակարդակը կախված է այն ըրջանից, վորուեղ աշխատում են բանվորները: Յեթե կյանքն այդ ըրջանում ինչ-ինչ պատճառներով թանգ է, ապա և աշխատավարձն այնտեղ բարձր է:

Որինակ, Մոսկվայում որական միջին աշխատավարձը 1927 թվին կազմում եր 3 ո. 44 կոպ., Լենինգրադում՝ 3 ո. 43 կոպ., Ռևրայնայում՝ 3 ո. 15 կոպ.:

Կառուցողների աշխատավարձի մակարդակը ունի նաև սեղոնային տատանումներ:

Միջին հաշվով կառուցողների որական աշխատավարձը 1926 թ. սեպտեմբեր ամսում բարձր եր ապրիլ ամսի աշխատավարձից 28 տոկոսով, 1927 թվին 25 տոկոսով:

Սեղոնային այդ տատանումները ժամանմբ բացատրվում են աշխատանքի տե-

սակի գովիտիությամբ (գարնանը—հախալատրաստական, հողային և այլն, աշնանը՝ ավելի վորակավոր)։

Բացի դրանից, տատանումների վրա մեծ ազդեցություն է ունենում աշխատանքի չուկայի անկանոնությունը և բանվորական ուժի պակասը, վոր զգացվում և աշնանը։ Այդ կողմից սեզոնային տատանումները հիվանդություններ են։

Ուստի թե միությունը և թե տնտեսական մարմինները միջոցներ են ձեռք առնում մեղմելու աշխատավարձի սեզոնային տատանումները։ Բանվորներն իրենք ել չպետք են, ոգտվելով չուկայում բանվորական ուժի պակասությունից, բարձր աշխատավարձ պահանջեն, վորովհետեւ դրա հետեւանքով խախտվում և հավաքական պայմանագիրը, թանգանում և կտուցումը, կրծատվում և շինարարությունը և ավելանում դորձազրկությունը։

Արտադրության մեջ, բացի վորակավորումից, աշխատավարձի վրա ազդում և նաև աշխատանքի վարձատրության ձեզ—գործարքայի՞ն, թե՛ որավարձու։ Կառուցման աշխատանքներում գործարքային սիստեմը գերկաշուռակ է; 1927 թվին գործարքով աշխատել են միջին հաշվով կառուցող բանվորների 74%։ Թե վոր-

չափ մեծ և գործարքային և որավարձու վաստակի մեջ յեղած տարրերությունը, յերեւմ և նրանից, վոր 1927 թվին գործարքով աշխատող կառուցողների ընդհանուր աշխատավարձի մեջ տարրի Փային դրույքը կազմում եր ընդամենը 50—60 տոկոս։ Հետեւապես գործարքով աշխատող բանվորը համարյա յերկու անգամ ավելի յե վաստակել նույն վորակավորման որավարձու բանվորից։

3. Միության տարի Փային քաղաքականությունը և տարի Փային ոռփորմանցիցնելը։

Մեր միության ընդհանուր տարրի Փային քաղաքականությունը ուղղված է մեղմելու անվորակ և վորակյալ բանվորների աշխատավարձի մեջ յեղած տարածայնությունը, վոչչացնելու նույն շրջանում, բայց տարբեր աշխատանքներում յեղած նույն վորակագորման բանվորների աշխատավարձի մեջ յեղած բազմապիսի բությունը և հնարավոր չափով կրծատելու նույն պրոֆեսիաների աշխատավարձի սեզոնային տատանումները։

Բացի այդ, միությունն այժմ վարում է աշխատավարձի մեջ տարի Փային դրույքի մասը բարձրացնելու գիծ։ Ներկայումս

Այդ մասը մեզանում կաղմում է 50—60  
տոկոս, իսկ գերվաստակը հասնում է  
հիմնական տարիֆային գրույքի 80—100  
%-ին: Այդ ցերեռութը աննորմալ է, գու-  
րսվածետև դա վոչչության և մտանում  
տարիֆային գրույքը, պատճառ է դառ-  
նում կիրառելու արտադրության սխալ  
նորմաներ և ուժեղացնում է որավարձու  
և գործարքով աշխատող բանվորների  
վարձատրության մեջ յեղած տարածայ-  
նությունը: Իսկ Հին տարիֆային անդե-  
կառույի և 10-կարգյան բանվորական  
ցանցի կիրառումը ուժեղացնում է տարա-  
ծայնությունն անվորակ և վորակյալ բան-  
վորների վարձատրության մեջ:

Այդ պատճառով մեր միությունը,  
ինչպես և մյուս միությունները, անցել են,  
այսպես կոչված, «տարիֆային ոեֆորմ»  
անցկացնելու աշխատանքի:

Տարիֆային ոեֆորմը կայանում է  
նոր տարիֆային տեղեկատույթի և 7-կտրդ-  
յան ցանցի անցնելու մեջ: Նոր տեղեկա-  
տունները և ցանցը տարբերվում են նախ-  
կիններից կարգերի թվով (10-ի փոխա-  
րեն՝ 7) և առանձին պրոֆեսիաների աշ-  
խատավարձի մեջ ավելի նորմալ փոխա-  
րաբերություններ ստեղծելով:

Նոր տարիֆային գրույքի անցնելով,

միաժամանակ բարձրանում է և 1-ին կար-  
գի գրույքը, վորովհետև նոր ցանցի և  
աեղեկատույթի 1-ին կարգը համապա-  
տասխանում է, որինակ, նախկինի 4-րդ  
կարգին:

Ենորհիվ 1-ին կարգի գրույքի բարձ-  
րանալուն, բարձրանում է տարիֆային  
գրույքի գերը գործարքային բանվորների  
աշխատավարձի մեջ, միջին գերվաստակի  
հավասարեցնելով նորմալ չոփի մուտքո-  
րապես 30 տոկոսին և մեղմում է գործար-  
քային և որավարձու բանվորների աշխա-  
տավարձի մեջ յեղած տարածայնու-  
թյունը:

Տարիֆային բարենորոգումը բացա-  
ռապես նպատակ ունի կանոնավոր փոխ-  
հարաբերություն սահմանելու տարբեր  
պրոֆեսիաների, աշխատավարձի մեջ,  
հաստատելու արտադրության կանոնավոր  
նորմաներ և բարձրացնելու տարիֆային  
գրույքի գերը: Ոեֆորմ անցկացնելով վոչ  
մի գեղազում չպետք է բարձրացնի աշխա-  
տավարձի փոնզը: Ուստի ոեֆորմին անց-  
նելիս անհրաժեշտ է վերանայել արտա-  
դրության նորմաներն այն հաշվով, վոր-  
ուսպեզի որավարձու և քիչ վորակավոր-  
րանվորների աշխատանքի վարձատրու-  
թյան բարձրացումը ծածկվի գործարքու-  
թյան բարձրացումը ծածկվի գործարքու-

յին սիստեմով աշխատող և բարձր վարձատրություն ստացող բանկորների արտադրության նորմաները վերանայելուց գոյացած տնտեսումով։

Իսկ վորպեսզի նորմաների այդ վերանայումը և բարձրացումը չառաջացնի մի շարք պրոֆեսիաների աշխատավարձի լնդհանուր անկում, ձեռնարկությունը պարտավոր և նոր նորմաների անցնելիս, ապահովել, վոր աշխատանքը կկազմակերպվի լավագույն ձեռվ, բանվորական ուժը առավել չափով կողտագործվի և այլն։ Տարիքային ոեֆորմը մեր միության գծով այս տարի անցե կացվում վորոշ շինարարություններում։ Յեկող տարի ոեֆորմը պետք է անցկացվի ամբողջ շինարարության մեջ։

4. Ի՞նչ և ստանում կառուցող բանկորը և ԱՀՄ-ում վորպես լրացում իր աշխատավարձի։

Ներկայումս բանվորը, բացի աշխատավարձից, ունի մի շարք արտօնություններ, առավելություններ և աշխատանքային յերաշխիքներ, վորոնք նախապատերազմյան ժամանակ ամենեին գոյություն չեն ունեցել։

Առաջին տեղը բոնում և բանվորների

սոցիալական ապահովագրությունը տընտեսական մարմնի հաշվին, վորի համար տնտեսական մարմինը ապահովագրական դրամարկղին վճարում է 7 տոկոս (նոր կառուցումների համար), վճարված աշխատավարձի հաշվով, իսկ բանվորն իրավունք է ունենում նպաստ ստանալու հիմնադրության, գործազրկության, հաշմանդամության և այլ գեպքերում։ Այնուհետեւ բանվորն այժմ ոգտվում է արձակուրդի իրավունքով, վորի համար տընտեսական մարմինը ծախսում է աշխատավարձի հաշվով մինչև 4 տոկոս։

Հեռացնելու դեպքում բանվորը պետք է նախորդ նախազգուշացվի, այլապես անտեսական մարմինը պարտավոր է վերել լուծարքային նպաստ 6 որից մինչև 2 շաբաթվա աշխատավարձի չափով (համաձայն աշխատանքի տևողության), վորի համար ծախսվում է մինչև 3 տոկոս, բանվորների աշխատավարձի հաշվով։

Զինվորական ծառայության կանչելու դեպքում բանվորին տրվում է նպաստ, համաձայն աշխատանքի տևողության։ Միաժամանակ բանվորը ստանում է վարձատրություն հասարակական պարտականություններ կատարելու ժամանակի համար (համագումարներին մասնակցե-

յին սիստեմով աշխատող և բարձր վարձատրություն ստացող բանվորների արտադրության նորմաները վերանայելուց գոյացած տնտեսումով:

Իսկ վորպեսզի նորմաների այդ վերանայումը և բարձրացումը չառաջացնի մի շարք պրոֆեսիաների աշխատավարձի ընդհանուր անկում, ձեռնարկությունը պարտավոր և նոր նորմաների անցնելիս, ապահովել, վոր աշխատանքը կկազմակերպի լավագույն ձեռվ, բանվորական ուժը առավել չափով կողտագործվի և այլն: Տարիքային ռեֆորմը մեր միության գծով այս տարի անցել կացվում վորոշ շինարարություններում: Յեկող տարի ռեֆորմը պետք է անցկացվի ամբողջ շինարարության մեջ:

4. Ի՞նչ է ստանում կառուցող բանվորը ԽՍՀՄ-ում վորպես լրացում իր աշխատավարձի:

Ներկայումս բանվորը, բացի աշխատավարձից, ունի մի շարք արտոնություններ, առավելություններ և աշխատանքային յերաշխիքներ, վորոնք նախապատերագման ժամանակ ամենախին գոյություն չեն ունեցել:

Առաջին տեղը բոնում և բանվորների

սոցիալական ապահովագրությունը տընտեսական մարմնի հաշվին, վորի համար տնտեսական մարմինը ապահովագրական դրամարկղին վճարում է 7 տոկոս (նոր կառուցումների համար), վճարված աշխատավարձի հաշվով, իսկ բանվորն իրավունք է ունենում նպաստ ստանալու հիվանդության, գործազրկության, հաշմանդամության և այլ գեղքերում: Այսուհետեւ բանվորն այժմ ողտվում է արձակուրդի իրավունքով, վորի համար տընտեսական մարմինը ծախսում է աշխատավարձի հաշվով մինչև 4 տոկոս:

Հեռացնելու գեղքում բանվորը պետք է նախորոք նախազգուշացվի, այլապես անտեսական մարմինը պարտավոր է վճարել լուծարքային նպաստ 6 որից մինչև 2 շաբաթվա աշխատավարձի չափով (համաձայն աշխատանքի տևողության), վորի համար ծախսվում է մինչև 3 տոկոս, բանվորների աշխատավարձի հաշվով:

Զինվորական ծառայության կանչելու գեղքում բանվորին տրվում է նպաստ, համաձայն աշխատանքի տևողության: Միաժամանակ բանվորը ստանում է վարձատրություն հասարակական պարտականություններ կատարելու ժամանակի համար (համագումարներին մասնակցե-

լու և այլն), վարձատրվում է յեղանակի պատճառով կամ վարչության հանցանքով որկամ ու զաղարի համար, ստանում է աշխատանքի վայրը տեղափոխվելու ժողովը և այլն:

Բացի այդ, մեծ մասամբ բանվորը տնտեսական մարմինների հաշվին ձրի կամ աժան գնով տեղ է ստանում հանրակացարաններում, իսկ զործավայրը երազրած տեղից հեռու լինելու դեպքում՝ նաև ձրի յերթենեկություն ելեկարաքարշով, բանվորական գնացքներով, պարուներով և այլն:

Այդ բոլոր արտոնությունները և աշխատանքային յերաշխիքները ևս բարձրացնում են բանվորի աշխատավարձը՝ 17—19 տոկոսով:

Իսկ յեթե հաշվելու լինենք, վոր տղնութեական մարմինները բանվորներին սպասարկելու համար հատկացնում են միջին՝ հաշվով 1 տոկոս շինկոմին և 1¼ տոկոս կուրուկարիքների համար, ապա պարզ է, վոր տնտեսական մարմնի՝ բանվորական ուժի հետ կապված ծախքը ավելի ևս մեծանում է և կազմում է Հիմնական աշխատավարձի վոչ պակաս քան 20 տոկոսը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄԱԽՆՔՆԵՐ

Զրույցի ժամանակ խմբակավարը պետք է ամենալայն կերպով ոգտագործի վոչ միայն յեղած ընդհանուր թվերը, այլ և պետք է ոգտագործի համապատասխան շինարարություն կամ շրջանի տվյալները:

Նախ և առաջ պետք է թվեր հավաքել և խմբակայինների առաջ լուսաբանել վերջին տարիներում հիմնական պրոֆեսիաների աշխատավարձի փոփոխությունը, համեմատել կառուցողների աշխատավարձը նույն շրջանի արդյունագործական բանվորների և նախաճեղափոխական շրջանի աշխատավարձի հետ։ Կառուցումների առանձին պրոֆեսիաների աշխատավարձի աճումը համեմատելիս, ցանկավորեց յեցույց տալ, թե վո՞ր պրոֆեսիաներում նկատելի յետ աշխատավարձի առանձնապես արագ աճում և ի՞նչն է դրա պատճառը (այդ պրոֆեսիայի բանվորների պակասը, աշխատանքների բնույթի բարդանալը, բանվորական որվա տեսականությունը և այլն), այլ և աշխատավարձի մեջ յեղած սեղոնային տատանումները բուտ առանձին պրոֆեսիաների։

Առանձնապես կարևոր նյութ և հավաքել և խմբակայինների առողջ պարզեց, և ՍՅԱԾԻԿԱԿԱՆ



լու Կ այլն), վարձատրվում է յեղանակի պատճառով կամ վարչության հանցանքով ակամա՝ դադարի համար, ստանում և աշխատանքի վայրը տեղափոխվելու ժամաքը և այլն:

Բացի այդ, մեծ մասմբ բանվարը տնտեսական մարմինների հաշվին ձրի կամ աժան գնով տեղ և ստանում հանրակացարաններում, իսկ գործավայրը իր ապրած տեղից հեռու լինելու գեպօւմ նաև ձրի յերթեւեկություն ելեկարաքարշով, բանվորական գնացքներով, պարուներով և այլն:

Այդ բոլոր արտոնությունները և աշխատանքային յերաշխիքները ևս բարձրացնում են բանվորի աշխատավարձը 17—19 տոկոսով:

Իսկ յեթե հաշվելու լինենք, վոր տրնտեսական մարմինները բանվորներին սպասարկելու համար հատկացնում են միջին՝ հաշվով 1 տոկոս շինկոմին և 1¼ տոկոս կուբուկարիքների համար, ապա պարզ է, վոր տնտեսական մարմին՝ բանվորական ուժի հետ կապված ծախքը ավելի ևս մեծանում է և կազմում է հիմնական աշխատավարձի վոչ պակաս բան 20 տոկոսոր:

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒԽՆՔՆԵՐ

Զրույցի ժամանակ խմբակավարը պետք է ամենալայն կերպով ոգտագործի վոչ միայն յեղած ընդհանուր թվերը, այլ և պետք է ոգտագործի համապատասխան շինարարության կամ շրջանի տվյալները:

Նախ և առաջ պետք է թվեր հավաքել և խմբակայինների առաջ լուսաբանել վերջին տարիներում հիմնական պրոֆեսիաների աշխատավարձի փոփոխությունը, համեմատել կառուցղների աշխատավարձը նույն շրջանի արդյունագործական բանվորների և նախաճեղափոխական շրջանի աշխատավարձի հետ: Կառուցումների առանձին պրոֆեսիաների աշխատավարձի աճուրդը համեմատելիս, ցանկալի յեցույց տալ, թե վո՞ր պրոֆեսիաներում նկատելի յե աշխատավարձի առանձնապես արագ աճում և ի՞նչն է դրա պատճառը (այդ պրոֆեսիայի բանվորների պակասը, աշխատանքների բնույթի բարդանալը, բանվորական որվա տեսականությունը և այլն), այլ և աշխատավարձի մեջ յեղած սեղոնային տատանումները՝ բայց առանձին պրոֆեսիաների:

Առանձնապես կարեոր նյութի համարքի և խմբակայինների առաջ պարզել, և սօսուհեալ 17



թե ինչից ե գոյանում գործարքով աշխատող բանվորների աշխատավարձը (տարի Փային դրույք, գերվաստակ, վոր պրոֆեսիաներն ավելի մեծ գերվաստակ ունեն, ինչ փոխարաբերությունների մեջ և որավարձու և գործարքով աշխատող բանվորների աշխատավարձը, գործարքով աշխատող բանվորների թիվը և այլն): Վոչ պակաս կարենոր և տալ անվորակ և փորակյալ բանվորների աշխատավարձի համեմատությունը իրականում և թե ինչպես պետք ե լինի այն, համաձայն տարի Փային տեղեկատույթի և ցանցի:

Այնուհետև պետք ե մոտենալ Միության տարի Փային քաղաքականության և տարի Փային ռեֆորմ անցկացնելուն։ Այս հարցը ամենից դժվարն ե և նրա լուսաբանումը խմբակում, նշանավոր չափով կնպաստի ռեֆորմը Միության կողմից գործնականում անցկացնելու աշխատանքին։ Ուստի խմբակավարը այդ հարցի համար պետք ե առանձնապես մանրազնին նյութ հավաքի և յեղած թվերն ու իր յեղակացությունները համաձայնեցնի շինկոմի և Միության հետ (տարի Փային գծով)։

Լրացուցիչ վճարումների և արտոնությունների նկատմամբ խմբակավարը

պետք ե նույնպես ողափորձի տվյալ շինարարության կամ ըրջանի այդ ծախքերի փաստական նյութը և պարզի, թե դրանք վորչափ բարձրացնում են աշխատավարձը։

Գրականություն խմբակայինների համար։ —Մեր Միության կե-ի հաշվեավությունը՝ Կառուցողների Համամիութեն ու կան ՎՊ-ըդ Համագումարում (եջ 59-61 ներառյալ և 68-70 ներառյալ)։

Գրականություն խմբակավարների համար։ —Նույնը, և Արհգրագիտության ձեռնարկ—Հրատ. ՀԱՄԿԵ-ի Կուլտրաֆնի, պրակ I (եջ 95-106)։ ՀԿԲԱՄ 2-ըդ Համառուսական Տարի Փ-Ծննդեսական Խորհըրդակցության վորոշումները (եջ 3-6)։ Կե-ի ըրջարերականները տարի Փային ռեֆորմ անցկացնելու մասին։

Զրույց յերկորդ

Աշխատավարձի կախումը աշխատանքի  
արտադրողականությունից:

Զրույցի նպատակը:

Զրույցի նպատակն է պարզաբանել,  
ինչո՞վ և վորոշվում մեր պայմաններում  
աշխատավարձի մուկարգակը և ինչո՞ւ  
մենք աշխատավարձի հետագա աճումը կա-  
պում ենք աշխատանքի արտադրողակա-  
ռության աճման հետ: Ամբողջիններից  
յուրաքանչյուրի համար պետք է պարզվի  
աշխատանքի արտադրողականության  
բարձրացման հիմնական ուղիները շինա-  
րարության մեջ, հետեապես և աշխատա-  
վարձի աճումը, վոր տեղի յե ունենում  
արտադրության կազմակերպչական-  
տնտեսական բարելավումների և  
բանվորի անձնական աշխատանքի ներու-  
ժություն ու աշխատանքային դիսցիպլի-  
նայի: Հաշվին: Առաջին հանդույցային  
հարցն ե՝ ինչու մեր պայմաններում պար-  
տադիր և աշխատավարձի աճման կախումը  
աշխատանքի արտադրողականության ա-  
շխատանքից: Այստեղ զեկումքարը պետք է հիմ-  
նումից:

Նավորապես հայտնաբերի շինարարու-  
թյան վրա գործադրվող սոցիալիստական  
կուտակման աղբյուրները և այն սերտ կա-  
պը, վոր ունի յերկրի ինդուստրացումը,  
պյուղական տնտեսության և ժողովրդա-  
կան հարստության աճումն ամբողջու-  
թյամբ առած՝ շինարարության բարե-  
լավման և աժանացման հետ: Ուստի  
պետք է առանձնապես բնողջավի, վոր կա-  
ռուցողների աշխատավարձի յուրաքանչ-  
չյուր աճում, վոր չի ծածկվում աշխա-  
տանքի արտադրողականության աճման  
պաշարով, նշանակում ե, վոր կառուցող-  
ները սպառում են այն կուտակումները,  
վոր գոյացել են բանվոր դասակարգերի և  
պյուղացիության ուրիշ մասերի աշխա-  
տանքի հաշվին:

Յերկրորդ հանդույցային հարցն է  
կառուցողների աշխատանքի արտադրողա-  
կանության հետագա բարձրացման ուղի-  
ները, վորպես աշխատավարձը բարձրաց-  
նելու միջոց: Դեկավարը պետք է մանրա-  
մասնորեն վերլուծի աշխատանքի արտա-  
դրողականության ունեցած կախումը ր  
արտադրության տեխնիկայից (մեքենա-  
յացում, ստանդարտացում, գործիք), աշ-  
խատանքի կազմակերպումից և բանվորա-  
կան ուժից ու ցույց տա այն հնարավոր

ազդեցությունը, վոր կարող է ունենալ  
բանվորական մասսան այդ հարցերի վրա,  
արտադրական խորհրդակցությունների  
աշխատանքներին մասնակցելու միջոցով:

Դրա հետ միասին պետք է պարզվի  
աշխատանքի արտադրողականության վրա  
ունեցած այն հսկայական նշանակությու-  
նը, վոր ունի բանվորի վորակավորումը,  
գիտակից վերաբերմունքը դեպի արտա-  
դրությունը և դեպի աշխատանքային գիտ-  
դիպլինան:

### ԶՐՈՒՑՑԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Ի՞նչ է տալիս կառուցողը արտա-  
դրությանը, աշխատանքի արտադրողա-  
կանության իմաստով և ինչից կախում  
ունի այն:

2. Ինչպես և սահմանվում աշխատա-  
վարձը արտասահմանում և ԽՍՀՄ-ում և  
ինչու յե աշխատավարձի աճումը կա-  
պակցվում աշխատանքի արտադրողակա-  
նության հետ:

3. Աշխատանքի արտադրողականու-  
թյան և աշխատավարձի կախումը կապու-  
ցվեց իրենից:

4. Կառուցողների աշխատանքի ար-  
տադրողականության և աշխատավարձի

կախումը արտադրության տեխնիկայից  
և կաղմակերպումից:

1. Ինչ է տալիս կառուցողը արտա-  
դրությանը, աշխատանքի արտադրողակա-  
նության իմաստով յեվ ինչից կախում  
ունի այն:

Կառուցող բանվորների աշխատանքի  
արտադրողականությունը մյուս արտա-  
դրությունից ավելի գժվար է հաշվառման  
յենթարկվում, վորովհետեւ շինարարու-  
թյան մեջ աշխատանքը շատ բազմազան և  
նույնիսկ առանձին մասնագիտություննե-  
րում, տարբեր բնույթի յեն կառուցում-  
ները և մեծ չափով գերակռում ե ձեռքի  
աշխատանքը: Այնուամենայնիվ տնտեսա-  
կան մարմինների տվյալները ցույց են տա-  
լիս, վոր կառուցողների որվա աշխատան-  
քի արտադրողականությունը մոտենում է  
նախապատերազմյանին, իսկ ժամվա ար-  
տադրողականությունը՝ աշխատանքները  
լավ կազմակերպելու դեպքում՝ համապա-  
տասխանում ե կամ նույնիսկ գերակռում  
նախապատերազմյանին:

Սակայն վերջին տարիներում շինա-  
րարության մեջ աշխատավարձի աճումը  
նշանակալից չափով արագ և ընթացել,

բան աշխատանքի արտադրողականությունը:

Բանվորների աշխատանքի արտադրողականությունը կախված է յերկու հիմնական պատճառից՝ բանվորից իրենից և աշխատանքի կազմակերպումից:

Արտադրողականության այն ժաման, վոր կախված է բանվորից իրենց, սովորաբար կոչվում է աշխատանքի ներուժություն։ Աշխատանքի ներուժության վրա ազգում է բանվորի վորակալորումը և պատրաստականությունը, այլ և աշխատանքի լրաբանության աստիճանը՝ աշխատանքային դիսցիլինային բանվորական ժամանակի լրիվ ողտագործման իմաստով։

Աշխատանքի արտադրողականության վրա՝ այդ բառի ներ իմաստով՝ այսինքն այն բանի վրա, վոր կախված է աշխատանքի կազմակերպումից, ազգում և արտադրության տեխնիկան, գործիքի և նյութեղենի հանկությունը, աշխատանքուների կազմակերպումը (նյութեղենի, դործիքների, աշխատող խմբերի ժամանակին հայթայթելը և տեխնիկական ցուցմունքներ անելը), բանվորական ուժի կազմակերպումը և նրա ողտագործումը, այն են բանվորական խմբերի համապատասխան

ընտրություն, աշխատանքի ուղիղ բաժանում առանձին բանվորների մեջ՝ համաձայն նրանց վորակալորման, ակամա դադարների վերացում և այլն։

Վորչափ լրի է կազմակերպված աշխատանքը, վորչափ բարձր և արտադրության տեխնիկան, վորչափ լրիվ և ոգտագործվում բանվորական ուժը մի կողմից և վորչափ բարձր և բանվորների վորակալորումը և նրանց աշխատանքային դիսցիլինան մյուս կողմից, այնչափ մեծ աշխատանքի արտադրողականություն և ստացվում աշխատանքներում։

2. Ինչպես և սահմանվում աշխատավարձի մակարդակը պարագանելամում և եւ ՍՀՄ-ում և ինչու աշխատավարձի անումը կապակցվում է աշխատանքի արտադրողականության անման հետ։

Կապիտալիստական պետության մեջ աշխատավարձի մակարդակը վորչափում է բանվոր դասակարգի և բուրժուազիայի ուժերի հարաբերությամբ։ Փողովրդականն անտեսության բարձրացման, արտադրության աճման և գործադրիության կրծառման շրջաններում, վորպես որենք, տեղի ունի աշխատավարձի բարձրացում՝ բանվոր դասակարգի ձևաձան տակ։ Անկման շրջանում (արտադրության կրծառում,

լոկառւտներ, զործագուրկների թվի ա-  
ճում) աշխատավարձը՝ ձեռնարկատերերի  
ճնշման տակ՝ ընկնում է:

Մեր խորհրդային պայմաններում աշ-  
խատավարձի մակարդակը սահմանվում է  
ծրագրային կարգով, խիստ հաշվի առնե-  
լով, թե ինչ և անհրաժեշտ արտադրել  
բանվոր դասակարգի կենցաղի և նրա վե-  
րածնման նորմալ պայմանների համար  
վորակես աշխատավարձ և ինչ և հարկա-  
վոր պահպանել ժողովրդական տնտեսու-  
թյան մեջ՝ վորակես կուտակում ժողովր-  
դական տնտեսության և յերկրի ինդուս-  
տրացման ընդարձակման և վերակառուց-  
ման:

Յարական մուսաստանից մեզ ծանր  
ժառանգություն եւ մնացել, վորը մինչեւ  
որս ել զգացվում է և վորը գեռես յերկար  
տարիներ կղզացվի: Այդ ծանր ժառանգու-  
թյունը յերկրի արդյունագործության  
թույլ զարգացումն է, վորը հետեւնք և  
նախկին իմպերիայի ոտարերկրյա ներմու-  
ծումից ունեցած կախման, հաղորդակ-  
ցության ամեն տեսակ ճանապարհների  
բացառիկ փոքր ցանցի, ներքին կուտա-  
կումների անբավարարության:

Բուրժուական թշնամիներով չըջա-  
փակված աշխարհի միակ խորհրդային

բանվորական պետության պայմաններն  
անհրաժեշտ են դարձնում մեր յերկրի  
տնտեսական զարգացումը, առավելապես  
մեր ներքին միջոցների և հնարավորու-  
թյունների հիման վրա: Այստեղից ել ա-  
ռաջանում է յերկիրը ինդուստրացնելու  
կուրսը, մուսաստանի միատարր գյուղա-  
տնտեսական (ագրարային) յերկրից ին-  
դուստրալ-ագրարային յերկիր դարձնելու  
կուրսը:

Յերկիրը ինդուստրալ-ագրարային  
դարձնելու խնդիրը կապված է ծախքերի  
հետ, պետք է հսկայական գումարներ դնել  
ամենից ավելի արդյունագործության և  
տրանսպորտի մեջ՝ նոր շինարարության,  
հիմնական վերանորոգումների և վերա-  
կառուցումների ձևով: Այդ ինդրի արագ  
լուծումը կախված է վոչ միայն բաց թո-  
ղած միջոցների քանակությունից, այլ և  
այդ միջոցները ուղիղ գործադրելուց,  
այսինքն, շինարարության առավել աժա-  
նացումից:

Յեր շինարարությունը մինչեւ այժմ  
ծայրահեղ թանգ է. համարյա յերեք ան-  
գամ թանգ և նախապատերազմյանից,  
այնինչ արդյունագործական ապրանքները  
և սննդամթերքները թանգացել են միջին  
հաշվով յերկու անգամից պակաս:

լոկառւտներ, դործագուրկների թվի ա-  
ճում) աշխատավարձը ձեռնարկատերերի  
ձնշման տակ՝ ընկնում է:

Մեր խորհրդային պայմաններում աշ-  
խատավարձի մակարդակը սահմանվում է  
ծրագրային կարգով, խիստ հաշվի առնե-  
լով, թե ինչ և անհրաժեշտ արտադրել  
բանվոր դասակարգի կենցաղի և նրա վե-  
րածնման նորմալ պայմանների համար  
վորպես աշխատավարձ և ինչ և հարկա-  
վոր պահպանել ժողովրդական տնտեսու-  
թյան մեջ՝ վորպես կուտակում ժողովրդ-  
ական տնտեսության և յերկրի ինդուս-  
տրացման ընդարձակման և վերակառուց-  
ման:

Յարական մուսաստանից մեզ ծանր  
ժառանգություն և մնացել, վորը մինչև  
որս ել զարգում և և վորը գենես յերկար  
տարիներ կզգացվի: Այդ ծանր ժառանգու-  
թյունը յերկրի արդյունագործության  
թույլ զարգացումն և, վորը հետևանք և  
նախկին իմպերիայի ուսարեցրյա ներմու-  
ծումից ունեցած կախման, հաղորդակ-  
ցության ամեն տեսակ հանապարհների  
բացառիկ փոքր ցանցի, ներքին կուտա-  
կումների անբավարարության:

Բուրժուական թշնամիներով չվճա-  
փակված աշխարհի միակ խորհրդային

բանվորական պետության պայմաններն  
անհրաժեշտ են դարձնում մեր յերկրի  
տնտեսական զարգացումը, առավելապես  
մեր ներքին միջոցների և հնարավորու-  
թյունների հիման վրա: Այստեղից ել ա-  
ռաջանում է յերկիրը ինդուստրացնելու  
կուրսը, մուսաստանի միատարր գյուղա-  
տնտեսական (ագրարային) յերկրից ին-  
դուստրալ-ագրարային յերկիր դարձնելու  
կուրսը:

Յերկիրը ինդուստրալ-ագրարային  
դարձնելու խնդիրը կապված է ծախքերի  
հետ, պետք է հսկայական գումարներ դնել  
ամենից ավելի արդյունագործության և  
տրանսպորտի մեջ՝ նոր շինարարության,  
հիմնական վերանորոգումների և վերա-  
կառուցումների ձևով: Այդ խնդրի արագ  
լուծումը կախված է վոչ միայն բաց թո-  
ղած միջոցների քանակությունից, այլ և  
այդ միջոցները ուղիղ գործադրելուց,  
այսինքն, շինարարության առավել աժա-  
նացումից:

Մեր շինարարությունը մինչև այժմ  
ծայրահեղ թանգեղ է. համարյա յերեք ան-  
դամ թանգ և նախապատերազմյանից,  
այնինչ արդյունագործական ապրանքները  
և սննդամթերքները թանգացել են միջին  
հաշվով յերկու անգամից պակաս:

Ուստի միանգամայն ուղիղ և կուսակցության և պետության վերցրած ընթացքը՝ շինարարությունը մաքսիմալ չափով աժանացնել. — այս տարի վոչ պակաս, քան 15 տոկոսով, իսկ հնդամյակում՝ վոչ պակաս, քան 30-40 տոկոս:

Փողովրդական տնտեսությունը և արդյունագործությունն ընդարձակելու, նոր ձեռնարկություններ կառուցելու միջոցները ստացվում են համազետական կուտակումների հաշվին: Այդ միջոցներն ստացվում են, վորովհետև գոյություն ունի մեր ձեռնարկությունների աշխատանքները բարելավելու և տեխնիկապես կատարելագործելու ուղիղ գիծ, այն հաշվով, վոր աշխատանքի արտադրողականությունից ստացված աճումը արդյունագործության մեջ մասամբ և միայն գործադրվում աշխատավարձի աճման վրա:

Աշխատավարձի աճման այդ կարգը առավել ես կիրառելի յենուե, կառուցողների համար:

Կառուցողների աշխատավարձի յուրաքանչյուր աճում, վոր գերազանցակառ չի ծածկվի աշխատանքի արտադրողականության աճումով, կինքի ժողովրդական տնտեսության մեջ կուտակված միջոցների վատնում, սպառում այն ավելցուկների,

վորոնք խնայված են ժողովրդական տընտեսության ուրիշ ճյուղերի բանվորների հաշվին:

Բացի գրանից, դա վո՞ւմիայն կհարվածի ինդուստրիային, այլ և կհարվածեր գյուղական տնտեսության: Զե՞ր վոր յերկրի ինդուստրացումը տարվում է վոչ միայն արդյունագործության կուտակումների հաշվին, այլև գյուղացիության վրա դրված հարկերի հաշվին: Միաժամանակ գյուղական տնտեսության զարգացումը անմիջականորեն կապված է արդյունագործության զարգացման, գյուղատնտեքնաների, պարագատացման նյութերի արտադրության հետ և այլն: Ուստի կառուցողների աշխատավարձի վրա ավելացած յուրաքանչյուր կոպեկ, վոր գերազանցակառ չի ծածկվում աշխատանքի արտադրողականության աճումով, համար և այն կուտակումների հավատակման, վոր արել և բանվոր դասակարգը և գյուղացիությունը, ժողովրդական տնտեսությունը բարձրացնելու համար:

Մեր միության ԿԿ-ը ԽՍՀՄ Պետպանի հետ միասին 1927 թվին նախատեսել են կառուցողների որական աշխատանքի արտադրողականության բարձրացում հառաջիկա հնդամյակում 25 տոկոս (միջին

հաշվով տարեկան 5 տոկոս), վորից վոչ  
ավելի քան 20 տոկոսը (տարեկան միջին  
հաշվով 4 տոկոս) կարելի յէ գործադրել  
աշխատավարձի բարձրացման վրա:

Բացի դրանից, նախատեսնված և հա-  
ռաջիկա հնդամյակում՝ կազմակերպչա-  
կան բարելավումների և սեղոնի բարձրաց-  
ման միջոցով՝ կառուցող բանվորի աշխա-  
տանքի միջին տեղությունը յերկարել,  
որինակ, և ամսի փոխարեն դարձնել տա-  
րեկան 8 ամսիս: Դրա շնորհիվ կառուցող-  
ների տարեկան աշխատանքի արտադրո-  
ղականությունը պիտի բարձրանա ևս 33  
տոկոսով, իսկ ընդամենը՝ 66 տոկոս: Իսկ  
կառուցողների տարեկան աշխատավարձը  
յնթադրվում է բարձրացնել ընդամենը  
60 տոկոսով:

Բոլոր կառուցողների նպատակն է լի-  
նելու ձգտել, վորպեսզի աշխատանքի ար-  
տադրողականության աճումը հասնի նա-  
խատեսած մակարդաշին, ստացված տըն-  
տեսման վորոշ մասը գործադրելով աշ-  
խատավարձի բարձրացման վրա:

Դրանից կախված և արդյունագոր-  
ծության և գյուղական տնտեսության շա-  
հերը: Դրանից է կախված նոն կառուցող-  
ների իրենց շահերը, վորովհետեւ թանգ  
արժեցող շինուարության դեպքում՝ քիչ

հույս կա այդ շինուարությունը հետա-  
գայում ծավալել, քիչ բանվորների կարիք  
կլինի և յերկարատև կլինի գործադրկու-  
թյան շրջանը:

3. Աշխատանքի արտադրողականու-  
թյան և աշխատավարձի կախումը բան-  
վորից իրենից:

Աշխատանքի արտադրողականության  
մակարդակի վրա ազգեցություն և ունե-  
նում ինչպես բանվորի աշխատանքի անձ-  
նական ներուժությունը, նույնպես և շի-  
նարարության կազմակերպումը: Արտա-  
դրության կազմակերպման վրա բանվոր-  
ները կարող են ուժեղ ազգեցություն ունե-  
նալ, արտադրական խորհրդակցություն-  
ների աշխատանքներին ակտիվ մասնակ-  
ցելու ճանապարհով:

Բացի դրանից, կարեւոր նշանակու-  
թյուն ունի յուրաքանչյուր բանվորի կող-  
մից իր աշխատանքի ներուժությունը  
բարձրացնելու անհրաժեշտությունը գի-  
տակցելը:

Դրա համար հարկավոր է նախ և ա-  
ռաջ, վորպեսզի կառուցողը հոգ տանի  
բարձրացնելու իր վորակավորումը և բա-  
րելավի աշխատանքի յեղանակները: Աշ-

հաստանքի պրացեսի ընթացքում հարկա-  
վոր ե պիտի շատ զննել, դիտել ավելի վո-  
րակյալ և փորձառու ընկերների աշխա-  
տանքը, ընդորբնակել նրանց աշխատան-  
քի, գործիքներ բանեցնելու յեղանակները  
և այլն։ Աշխատանքից ազատ ժամանակ  
հարկավոր ե շատ կարդալ տեխնիկական  
դրականության շինարարության մտախն,  
հաճախել Միության կազմակերպած ա-  
կումբներին առնեցներ արտադրական խըմ-  
բակներ, աշխատել ընդունվել փորակավո-  
րումը բարձրացնող կուրսեր։ Բացի այլ,  
ազատ ժամանակ պետք ե խորագննին վեր-  
լուծել իր արտադրությունը։ Մտածել բա-  
րելավելու գործիքների հատկությունը,  
աշխատանքի յեղանակները, մտածել, թե  
վոր ձևով լավ ե սկսել և կատարել իրեն  
արված հանձնարարությունը։

Եթե ինքը կասկածում էս, խորհր-  
դակցիր ավելի փորձառու ընկերոջ հետ,  
գնա Շինկոմ, խոսիր այդ մասին ձարսա-  
րադիտական-տեխնիկական սեկցիայում։

Վորակավորման մակարդակից, աշ-  
խատանքին գիտակցաբար մոտենալուց  
կախված ե վոչ միայն աշխատանքի արտա-  
դրումականությունը և աշխատավարձի  
շափը, այլև շինարարության աժանու-  
թյունը, այսինքն պետության շահը։

Բայց դլխավորը, վոր չպետք ե մոռա-  
նա բանվորը, դա աշխատանքային դիսցիպ-  
լինան ե՝ աշխատանքի ժամանակ։ Ճշմա-  
րիտ ե, գործարքային սիստեմը չտապեց-  
նող ե, սակայն և այնպես մեզանում աշխա-  
տանքից խուսափելը և ակամա դադարը  
չափազանց մեծ ե։

«Տերունական» տոներից ու  
կիրակիներից հետո աշխատանքից խուսա-  
փելը, պարապ կանգնելը հաճախ ծխելու,  
խոսակցության, նյութերի սպասելու  
պատճառով՝ վորը կարելի յե նախորոք  
ստանալ՝ և այլն, այս բոլոր յերեսությու-  
նը վոչ միայն քցում են աշխատանքի ար-  
տադրողականությունը և աշխատավարձը,  
այլև խախտում են աշխատանքի նախա-  
գծած պլանը։

Ուստի յուրաքանչյուր կառուցող բան-  
վորի նպատակը պետք ե լինի թույլ չտալ  
խուսափումներ և դադարներ, ամբողջու-  
թյամբ գործադրել բանվորական ժամա-  
նակը և պայքար մղել իր ընկերների պա-  
րապ թրև զալու և անհոգության դեմ։

Միաժամանակ, առանձնապես գոր-  
ծարքային աշխատանք կատարելիս, ամեն  
մի բանվոր պետք ե հարկավոր վորակի  
աշխատանք կատարի, չափից ավելի չշտա-  
պի, նորմայից ավել կատարելու յետևից

չընկնի՝ ի վնաս աշխատանքի հատկության:

Բանվոր գառակարդը Խորհրդային Միության մեջ հանդիսանում է պետության և ժողովրդական տնտեսության կոլլեկտիվ տերը:

Ուստի յուրաքանչյուր բանվորի նըպատակների մեջ պետք է մտնի ինչպես թերությունները և անկարգությունները վերացնելու համար կատարած ակտիվ աշխատանքը, նույնպես և վորոշակի աշխատանքային դիսցիպլինան և հանձնարարված պարտականությունների կատարումը: Դա ժողովրդական տնտեսության, դրա հետ միասին ուրեմն և աշխատավարձի աճման գլխավորագույն միջոցն է:

4. Կառուցողների աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կախումը արտադրության տեխնիկայից և կազմակերպումից:

Արտադրության \* տեխնիկայի և կազմակերպման բարելավումը բանվորների աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի բարձրացման ամենահիմնական միջոցն է: Եինարական արտադրության տեխնիկայի բարելավում ասելով, Հասկացվում է շենքերի և նրանց մասերի

բազմաթիվ տեսակներից այդ տեսակների սահմանափակ թվի անցնելը (ստանդարտացում), իսկ դրա հետ միասին, ձեռքի աշխատանքից մեքենայի աշխատանքի, հին պապական գործիքներից ավելի կատարելագործված գործիքների անցնելը:

Ամենահասարակ կերպով արված հաշվները ցույց են տալիս, վոր շինարարական արտադրության մեքենայացումը կարող է աժանացնել խոշոր արդյունագործական կառուցումները մինչև 4-5%-ի: Առանձին մեքենաների հաշվով տնտեսման տոկոսը, ձեռքի աշխատանքի համեմատությամբ, կազմում է խճախառնման և եկավակատորային աշխատանքում մինչև 50%-ի, իսկ յերկաթբետոնային աշխատանքների համար հարկավոր պահանդագործության (արմատուրա) մեջ՝ մինչև 66%:

Աշխատանքի կազմակերպման բարելավումը իր մեջ պարունակում է աշխատանքը ծրագրով տանելը, իր ժամանակին կառուցումների համար նյութեր և դրամական միջոցներ պատրաստելը, պատրաստ նախադեր և բանվորական գծագրեր ունենալը, բանվորներին իր ժամանակին կարգադրություններ, և տեխնիկական շահուցումներ անելը, գծագրեր հանձնելը և

տեխնիկական հասկացողության ցուցմունք-ներ անելը, գծագրեր հանձնելը և տեխնիկական հսկողության ուղիղ կազմակերպումը: Սրա մեջ ե մտնում նաև բանվորական ուժի ճիշտ ոգտագործումը՝ բանվորական խմբակներ կազմելու, աշխատանքը առանձին բանվորների մեջ բաժանելու և աշխատանքի որր լրիվ ծանրաբեռնելու իմաստով: Թե վորչափ կարեոր և այս ամենը կարգի գցել, յերեսում ե նրանից, վոր ըստ Պետպլանի տվյալների, աշխատաչափի կանոնագիրքը քննելիս, հայտնաբերված ե, վոր կառուցման աշխատանքներում ժամանակի վոչ պակաս քան 20% գնում ե ամեն տեսակ պարագ մնալու, ցուցումներ ստանալու և հանգստի վրա:

Թե վորչափ անհրաժեշտ ե աշխատանքի և բանվորական ուժի հարկավոր ձեռվ կազմակերպումը, յերեսում ե նրանից, վոր, որինակ, Գերմանիայում, համարյա մեզ հետ միանման տեխնիկա ունեցող վորմային ախշատանքում վորմանադիրը 10 ժամյա բանվորական որում շարում ե 1,500 հատ աղյուս, իսկ մեղանում՝ ընդամենը 400 հատ՝ 8 ժամում: Այդ տարրերության պատճառը, բացի լավ վորակավորությունից, հետեանք ե նաև աշխատանքի բա-

ժանումը և նյութի մատակարարումը լավ կազմակերպելու:

Տեխնիկայի բարձրացումը և արտադրության կազմակերպումը հանդիսանում է վարչության հիմնական խնդիրը: Բայց և բանվորական մասսան պետք ե դրա վրա նշանավոր չափով ազդեցություն ունենա, ակտիվ մասնակցելով արտադրական խորխըրդակցություններին, հրապարակ հանելով կառուցման մեջ նկատված հիվանդագիրները և ցույց տալով թերությունները վերացնելու գործնական միջոցներ:

Եինարարության բարելավման և աժանացման ամենամեծ հնարավորությունները գտնվում են հատկապես արտադրության տեխնիկայի բարելավման աշխատանքի ու բանվորական ուժի լավ կազմակերպման մեջ:

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Այս զրոյցի ժամանակ ղեկավարը պետք ե նույնակես, ըստ հնարավորի, լայն կերպով ոգտագործի այն կառուցման կամ շրջանի փորձը և տվյալները, ուր աշխատում ե խմբակը: Ամենից առաջ անհրաժեշտ ե հետեւ աշխատանքի արտադրողական աճման ընթացքին վերջին տարինե-

րում և նույն ժամանակում աշխատավարձի աճման չափին։ Աշխատանքի արտադրողականության վերաբերյալ թիվը ցանկանալի յէ վերցնել միայն այն աշխատանքներից, վորոնք յենթարկվում են հաշվառման և համեմատության. որինակ՝ վորմնալրի արտադրողականությունը՝ ըստ շարած աղյուսների, ինձոնագործինը՝ ըստ դետեզած ինձոնի կուբերի, ներկարարները՝ ըստ ներկապատերի և այլն։

Տեխնիկայի և արտադրության կազմակերպման աշխատանքի արտադրողականության վրա ազդելու հարցը քննելիս, անհրաժեշտ ե գործնական տվյալներ տալ այն մասին, թե ինչ ազդեցություն ե ունեցել աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի աճման վրա այս կամ այն մեքենայի գործադրությունը (խոչը կառուցումների մեջ), վարչությունից կախված ակամա դադարի կըրճատումը, բանվորական խմբակների ընտրության և նրանց ոգտագործման բարգորումը և այլն։

Աշխատանքի անձնական ներուժության վերաբերյալ ցանկալի յէ թիվը բերել, թեկուզ տնտեսական մարմինների վեճակագրությունից, կամայական բացա-

կայությունների մասին, նամանավանդ կրոնական տոներին և հանգստի որերից հետո, աշխատանքի որվա ծանրաբեռնը վածության մասին և այլն, թվերով ցույց տալով, թե վորչափով այդ հանդամանքը իջեցնում է բանվորի աշխատավարձը։ Միաժամանակ ոգտակար ե բերել համեմատական տվյալներ միենույն աշխատանքի տարբեր վորակավորման բանվորների աշխատանքի արտադրողականության և արտադրողականության կախումը աշխատանքի յեղանակներից, դրանով իսկ մզելով բանվորներին բարձրացնելու իրենց վորակավորումը։

Արտադրության լավագույն կազմակերպման վրա բանվորների ունեցած ազդեցությունը անհրաժեշտ է լուսաբանել արտադրական խորհրդակցությունների տվյալներով, մասնավորապես բերելով յեղած գործնական առաջարկները և արտադրության բարելավման վրա ունեցած այդ առաջարկների արդյունքը։

Ամբողջ զբույցը պետք է կառուցված լինի այն ձեռվ, վորպեսզի խմբակայինները աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության գոյությունը ունեցող մակարդակից յելնելով, մոտենան ընդհանուր խնդիրների, այն և շինարարության

աժանացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման, այն հաշվով, վոր այդ բարձրացման մի մասը գործադրվի աշխատավարձի աճմանը վրա: Ընդհանուր խնդիրներից պետք է խմբակայիններին մոտեցնել յուրաքանչյուր բանվորի առաջ կանգնած այն խնդիրներին, վորոնք գործադրվելու յեն տվյալ շինարարության կամ շրջանի պայմաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՄԲԱԿԱՅԻՆՆԵՐԻ  
ՅԵՎ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Մեր Միության կե-ի հաշվետվությունը VII-րդ համազումարում: «Արհագիտության ձեռնարկ»—հրատ. ՀԱՄԿի կուլտ բաժնի, պրակ I-ին, եջ 81-88, 106-112.

---

ԶՐՈՒՅ յԵՐՐՈՒԴ

Ինչպես բարձրացնել աշխատավարձը  
ԶՐՈՒՅՑՑԻ ՆՊԱՏԱԿԸ:

Զրույցի նպատակն է բացատրել խմբակայիններին աշխատավարձի գնողական ընդունակության նշանակությունը և բանվորի աշխատավարձի ճիշտ գործադրության անհրաժեշտությունը, նրանից առավել ոգուտ ստանալու համար:

Նախ և առաջ ղեկավարը պետք է բազմակողմանի քննության յենթարկի մըթերքների և գործածության առարկաների գների ունեցած աշդեցությունը իրական աշխատավարձի վրա և ցույց տա, թե ինչպես հառաջիկայում մթերքների գների իջեցումը պետք է բարձրացնի իրական աշխատավարձը, բացի իր ունեցած նոմինալ նշանակությունից: Միաժամանակ անհրաժեշտ և պարզել ոպպոգիցիայի տեսակետի սիսալը՝ բարձրացնել աշխատավարձը անկախ աշխատանքի արտադրողականությունից՝ ասլրանքների գների բարձրացման հետ միաժամանակ, վորը, աշ-

խատավարձի նոմինալ բարձրացման դեպքում պիտի հանգի իրական աշխատավարձի անկման։ Նոմինալ և իրական աշխատավարձի մեջ յեղած տարբերությունը լուսաբանելը կազմում է զրույցի առաջն հանգույցային հարցը։

Ապա զեկավարի նպատակի մեջ և մտնում պարզել իրական աշխատավարձի աճումը, համաձայն ավելի թանդարժեք մթերքների մեծացող գործադրության, և նրա ունեցած կապը կոռապերացիայից և վոչ թե մասնավորից արված գնումներից։

Մյուս հանգույցային հարցը կազմում է ԽՍՀՄ բանվորի անձնական բյուջեն և նրա ինչ տարբերից կազմված լինելը, այլ և անձնական բյուջեյի և աշխատավարձը ոգտակար կերպով գործադրելու մեջ գոյություն ունեցող սերտ կապը։ Առանձնապես մահրակրկետ կերպով պետք է քննի ամսնական բյուջեյի այնպիսի դրական կողմեր, ինչպիսիք են սննդի, հագուստի, կուլտուրական կարիքների և առողջապահության վրա արված ծախքերը և բացասական ծախքերը, այն եւ վորդելից բժանելիքների վրա արված ծախքերը։ Վոգելից բժանելիքների նկատմամբ հատկապես պետք է շեշտել, վոր նրանք վոչ միայն անարտադրական կերպով իր-

ժուռմ են աշխատավարձի մի մասը, այլ և այն, վոր նրանց գործածությունը առաջցնում է առողջության քայլքայում, կամայական բացակայություններ և աշխատանքի արտադրողականության անկում, վորը աշխատավարձի հետագա անկման պատճառ և հանդիսանում։

Հաջորդ հանգույցային հարցը, վոր անմիջականորեն կապված է սեզոնայինների գյուղի համար կուտակած միջոցների պահպանման հետ, պետք է պարզաբանի դրամները խնայողական դրամարկղներում, փոխառությունների միջոցով պահելու առավելությունը։

Վորպես յեղրափակում, ղեկավարը պետք է պարզի անձնական կյանքում արված խնայողության և սոցիալիստական կուտակման մեջ յեղած անմիջական կապը և աշխատավարձի հետագա աճման ուղղակի կախումը սոցիալիստական կուտակումից։

### ԶՐՈՒՅՑԻ ԾԲԱԳԻՌԼ:

1. Ի՞նչ տարբերություն կա նոմինալ և բեալ աշխատավարձի մեջ։

2. Բարձրացնել նոմինալ աշխատավարձը թե՝ իջեցնել ապրանքների գները։

3. Ի՞նչից ե յերկում իրական աշխա-

տավարձի աճումը և ինչ կապ ունի այն կոռպերացիայի հետ:

4. Ի՞նչից ե գոյանում իջջմ-ում բանվորի բյուջեն:

5. Սեզոնային կառուցողը ի՞նչպես կարող է ավելի լավ պահել իր հավաքած դրամը:

6. Ե՞րաստամարդի՝ ճիշտ գործադրության և շխատանքի արտադրողուհանության կապը:

7. Տնտեսության բեժիմը անձնական կյանքում, սոցիալստական կուտակում, աշխատավարձի հետադա աճում:

## ԶՐՈՒՑՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

1. Ի՞նչ տարբերություն կա նոմինալ և բեալ աշխատավարձի մեջ:

Նոմինալ աշխատավարձը դրամի այն քանակն է, վոր բանվորն ստանում է ձեռնարկությունից:

Նոմինալ աշխատավարձով դեռ ևս չի կարելի դատել աշխատավարձի իրական չափի մասին: Որինակ, 1921-23 թվականներին մենք աշխատանքի համար ստանում եյինք միլիոն և նույնիսկ միլիարդ բորբներ, բայց դրանով ավելի քիչ ապ-

րանք կարող եյինք գնել, քան այժմ մեկ մանեթով:

Իրական աշխատավարձը նոմինալ աշխատավարձի գնողական ընդունակությունն է: Իրական աշխատավարձը կախում ունի մթերքների և ապրանքների գրներից:

Ներկայումս կառուցողը ըստ նոմինալի, յերկու անգամ ավելի յե ստանում նապատերազմյանից (ստանում է յերկու անգամ ավելի գրամ), իսկ իրական նշանակությամբ նրա աշխատավարձը միայն համապատասխանում է նախապատերազմյանին, վորովհետեւ ապրանքները և սննդամթերքները թանգացել են միջին հաշվով յերկու անգամ:

2. Բարձրացնել նոմինալ աշխատավարձը թե՞ իշենցել ապրանքների գները:

Բանվորի համար կարեռ և վոչ թե դրամի այն քանակը, վոր նա ստանում է իր աշխատանքի համար, այլ ապրանքների այն քանակը, վոր նա կարող է գնել այդ դրամով: Ուստի աշխատավարձը կարելի յե բարձրացնել վոչ միայն ի հաշիվ բանական դրամի ստացած դրամի քանակի հավելման, այլև ի հաշիվ ապրանքների գների իջեցման:

Ոպպողիցիան անցյալ տարի «Հրապութիչ» առաջարկ եր անում, այն ե՛ բարձրացնել բանվորի աշխատավարձը, առանց հաշիվ առնելու աշխատանքի արտադրողականության աճումը, բայց դրա հետմիաժամանակ բարձրացնել և ապրանքների գների գեղագումը:

Միանգամայն պարզ ե, վոր նոմինալ աշխատավարձի այլպիսի հավելման և ապրանքների գների բարձրացման դեպքում, բանվորի իրական աշխատավարձը վոչ միայն չեր բարձրանա, այլև, հավանական ե, նշանակալից չափով կապակասեր, չխոսելով դեռ ևս այն մասին, վոր նման սիստեմը քայլքայում կառաջացներ մեր տնտեսության մեջ:

Ենաքարության գծով հառաջիկա հինգ տարում ըեալ որական աշխատավարձի աճումը նույնպես նկատի յե առնված յերկու աղբյուրով՝ ի հաշիվ նոմինալի բարձրացման (ի հաշիվ աշխատանքի արտադրողականության աճման) 20% և ի հաշիվ ապրանքների և սննդամթերքների ընդհանուր աժանացման ևս մոտ 15%:

Այդպիսով, աշխատանքի արտադրողականության բավարար աճման դեպքում, հնդամյակի վերջում, կառուցողը ներկայիս ամեն մեկ մանեթի փոխարեն

կստանա 1 ր. 20 կոպ. իսկ այդ 1 ր. 20 կոպեկի գնողականությունը կկազմի 1 ր. 38 կոպ.: Նշանակում ե կառուցողի իրական որական աշխատավարձը հինգ տարում պետք ե բարձրանա ընդամենը 38%:

Կառուցողի իրական տարեկան աշխատավարձը՝ սեղոնը 6 ամսոց մինչև 8 ամիս յերկարագելու հաշվով՝ պետք ե բարձրանա ընդամենը մոտ 74%:

3. Ինչի՞ց ե յերեսում իրական աշխատավարձի աճումը և ինչ կապ ունի այն կոպերացիայի եետ:

Բանվորի իրական աշխատավարձի աճումը ԽՍՀՄ մեջ վորոշակի յերեսում և նախ բանվորի սննդի վորակի բարեկալումից և ապա բանվորական բյուջեյում սննդի համար յեղած ծախքերի մասը պակասելուց:

Ըստ Մ. Գ. Տոմսկու «Տրոցկիզմը և բանվոր դասակարգը» բրոցյուրի տվյալների, 1921-ից մինչև 1926 թիվը բանվորների սնման մեջ տեղի յեն ունեցել հետեւյալ փոփոխությունները՝

	Թժանոյ.	Ցորենի հաց.	ալուր
1922 թ.	31,08	3,50	1,33
1924 թ.	16,40	13,23	5,75
1926 թ.	11,54	15,55	6,16

Միաժամանակ, յեթե քաղցի տարիներում սնման ծախքերը կազմել ե բանվորի բյուջեյի  $\frac{1}{3}$ , ապա 1926 թվին դրա վրա ծախսվել ե բանվորական բյուջեյի  $\frac{1}{2}$ -ից պակաս:

Իրական աշխատավարձի բարձրացումը կախված ե այն հանգամանքից, թե բանվորը վորտե՞ղ է գնում իրեն հարկավոր ապրանքները՝ կոռապերացիայից թե՝ մասնավոր առևտրականից: Ապրանքների արժեքը կոռապերատիվում նշանակալից չափով ավելի ցածր ե, քան մասնավորների մոտ: Ուստի, բանվորը գնումները կատարելով կոռապերացիայում, բարձրացնում ե իրական աշխատավարձը:

Արհմիությունների ՎII համագումարում (1926 թ. դեկտեմբերին) Ցենտրոսայուղի արած զեկուցման տվյալների հիման վրա մթերքները և ապրանքները կոռապերատիվում աժան են մասնավորից  $10-12\%$ -ով: Նշանակում ե, յուրաքանչյուր բանվոր, գնումները կատարելով կոռապերատիվում, իր տնտեսության ամեն մեջ մասնեթին տնտեսում ե  $10-12$  կոպեկ:

Բայց դրանից, կոռապերացիայում գրենումներ անելով, բանվորը ողնում ե նրա հետագա զարգացման ու ամրապնդման և մասնավոր առևտրի թուլացման:

4. Ինչի՞ց ե կազմվում ԽՍՀՄ բանվորի բյուջեն:

Բանվորի բյուջեն ԽՍՀՄ-ում 1926 թվին կազմվել ե հետևյալ ծախքերից— 47,4% սնունդ, 18,8% հագուստ և վոտնաման, 11,8% բնակարան և կոմունալ ծառայություններ, 10,4% —զանազան ծախքեր, 4,4% կարասի, ամանեղեն և տնտեսական իրեր, 2,6%—հասարակական գուղաքական ծախքեր, 1,7% կուլտուր-կրթական ծախքեր և 2,9% վոդելից ըմպելիքներ (թվերը վերցրած են Արհգրատիտության ձեռնարկի 1-ին պրակից):

Ծախքերի մոտ կեսը կազմում ե սրնունդի վրա յեղած ծախքը: Բնակարանի, հագուստի և վոտնամանի հետ միասին այդ ծախքերը կազմում են բյուջեյի  $\frac{1}{3}$ : Այդ ծախքերը, անտարակույս անհրաժեշտ են, վորովհետեւ կապված են բանվոր դասակարգի առողջության և աշխատունակության պահպանման ու յերիտասարդ բանվորության դաստիարակման հետ:

Հասարակական և կուլտուրական կարիքների ծախքը կազմում ե ընդամենը բանվորական բյուջեյի 4,3 տոկոսը, և դա ակնհայտնի կերպով անբավարար է: Ղնկատի առնելով մեր կուլտուրական ցածրակարդակը:

Համեմատաբար մեծ բաժին է կազ-  
դում վոգելից ըմպելիքների ծախքը՝ 1926  
թվին բանվորական բյուջեյի 2,9 տոկոս,  
1924 թ. 1 տոկոսի դիմաց։ Այդ ծախքե-  
րը վոչ միայն անարտադրական են և  
վնասակար բանվորական բյուջեյի հա-  
մար, այլ և նրանք վատ են անդրադառ-  
նում նաև արտադրության վրա։

Կառուցող բանվորների, մասնավորա-  
պես սեզոնայինների բյուջեյի տվյալները  
ճշտորեն պարզված չեն։ Աշխատավարձից  
մի նշանակալից մաս հանելուց հետո՝ վո-  
րը ուղարկվում է դյուլ՝ աշխատավարձի  
մնացորդի մեծագույն մասը ծախսվում է  
ոննդի վրա։

Բնակարանային և տնտեսական ծախ-  
քեր կառուցող սեզոնայիններն աշխատան-  
քի ժամանակ մեծ մասամբ չունեն։ Կա-  
ռուցողների հագուստի և վոտնամանի,  
այլ և հասարակական ու կուլտուրական  
կարիքների ծախքերը ցածր են, քան այլ  
արտադրության բանվորներինը։

Սակայն, անտարակույս բարձր և  
վոգելից ըմպելիքների և ուրիշ անարտա-  
դրական ծախքերը։

Կառուցող բանվորի բյուջեյի առանձ-  
նահատկությունները հարկադրում են ա-  
վելի հոգ տանել, վոր տուն ուղարկելու

համար հատկացված դրամը՝ չծախսվի,  
վոր բյուջեյի գերակշռող մասը կազմող  
ոննդի մթերքները գնվեն առավելապես  
կոռպերացիայում, բարձրացվի կուլտուր-  
հասարակական կարիքների վրա յեղած  
ծախքերը և իջեցվի կառուցողի բյուջե-  
յում վոգելից ըմպելիքների վրա յեղած  
ծախքը, ծավալելով «արբեցողության»  
դեմ մզգող պայքարը, ուժեղացնելով  
կուլտաշխատանքը։

5. Սեզոնային կառուցողը ինչպես  
կարող է իր հավաքած դրամն ավելի լավ  
պահել։

Սեզոնային կառուցողը իր աշխատա-  
վարձի նշանակալից մասը ուղարկում է  
դյուլ։ Դրամը միշտ չի հաջողվում ու-  
ղարկել, չխոսելով գեռ այն մասին, վոր  
շատ կառուցողներ, վստահ չլինելով, վոր  
ապագայում ևս աշխատանք կունենան,  
ընդհանրապես դրամը «համենայն դեպս»  
պահում են իրենց մոտ։ Դրամը պահում  
են թաշկինակներում, ծոցերում, կոշիկ-  
ների մեջ և այլն։ Դրամը այդ ձեռով պա-  
հելիս հեշտ է կորցնել, կարող են գողանալ  
և այլն։

Բացի դրանից, այդ ձեռով պահելու  
դեպքում, դրամը պառկում և անողութ,

վոչ մի շահ չբերելով և յերբեմն «գլուխը տաքացած ժամանակ» ծախսվում է հարբեցողության վրա, տանուլ և տրվում թղթախաղում և այլն:

Այնինչ մեր պետությունը դրամի խիստ կարիք ունի և իրեն դրամ պահ տվողին մեծ տոկոս է տալիս:

Ուստի պետության և իր սեզոնային-կառուցողի շահերը պահանջում են, վորպեսզի խնայողությունը պահպի վոչ թե «պուլիկում», այլ պետության մոտ:

Խնայողությունները պահելու համար գոյություն ունեն, նախ և առաջ ինայողական դրամարկղներ, վորոնք վճարում են տարեկան 8 տոկոս: Այլ կերպ ասած, մեկ տարի դրամարկղում պահված մեկ մանեթը 8 կոպեկ շահ է բերում:

Նույնչափ ողտակար ե պետական փոխառության խաղարկու տոմսեր գնելը, խաղարկու տոմսերը ևս հանձնելով բանկ պահելու: Խաղարկու տոմսերը նույնպես տալիս են 6-8 տոկոս շահ, այսինքն մանեթին 6-8 կոպեկ տարեկան, բացի դրանից, խաղարկու տոմսերով կարելի յե մեծ դումար տանել:

Դրամը հանձնելով խնայողական դրամարկղ պահելու կամ փոխառություն դնելով, կառուցողը ոգնում է պետությանը և ինքը ևս շատ շահվում է, դրամը ապահով տեղ պահելով և դեռ տոկոս ել ստանալով:

Թյանը և ինքը ևս շատ շահվում է, դրամը ապահով տեղ պահելով և դեռ տոկոս ել ստանալով:

6. Աշխատավաճի և աշխատանքի արտադրողականության նիշտ ոգտագործման մեջ յեղած կապը:

Բանվորն աշխատավարձ ստանում է նրա համար, վորպեսզի ստացած դրամով կարողանա ունենալ հարկավոր սնունդ, համապատասխան բնակարանային պայմաններ, դաստիարակի և ուսման տա իր յերեխաններին և բարձրացնի իր անձնական կուլտուրական մակարդակը:

Դա պահանջում է պետության և արտադրության շահը:

Մյուս կողմից աշխատավարձի ամեն մի վատնում հարված է հասցնում վոչ միայն իրենց բանվորին ու նրա ընտանիքին, այլ և հարվածում է պետությանը և արտադրությանը:

Վերցնենք, որինակ, աշխատավարձը թղթախաղում տանուլ տալը, հարբեցողության վրա վատնելը և այլն:

Դա ամենից առաջ կը ճատում է բանվորի բյուջեն և իջեցնում բացարձակորեն անհրաժեշտ և ոգտակար կարիքների վրա արվող ծախքը:

Բայց առանձնապես կարեոր ե այն,  
վոր բանվորը դրամը հարբեցողության  
վրա և թղթախաղի մեջ չպրտելով, սովո-  
րաբար լինում ե թրև յեկող և դեպի իր  
պարտականություններն անուշադիր:

Ավելին. հարբեցողությամբ տարգած  
բանվորը շատ չուտ կորցնում է իր առող-  
ջությունը, չուտ ե հոգնում, ավելի հա-  
ճախ ե յենթակա դժբախտ պատահարնե-  
րի, քիչ արտադրողականություն ե տա-  
լիս և հաճախ փչացնում ե աշխատանքը:

Այդ ամենը վոչ միայն անդրադառ-  
նում ե նրա հետագա աշխատավարձի վրա,  
այլ և անդրադառնում ե արտադրության  
ընթացքի վրա: Հետեւապես, աշխատա-  
վարձի ամեն մի մանեթ, վոր ողտակար  
կարիքների վրա չի ծախսվում, սովորա-  
բար հետագայում մի քանի մանեթի վնաս  
և հասցնում բանվորին, աշխատանքի ար-  
տադրողականության անկման հետեւան-  
քով պակասեցնելով նրա աշխատավարձը,  
այլ և կամայական բացակայությունների,  
փչացումների և այլն պատճառով ահագին  
վնաս և հասցնում նաև արտադրությանը:

Այդ պատճառով յուրաքանչյուր գի-  
տակից կառուցող, վոր ցանկանում է  
բարձրացնել իր աշխատավարձը, պետք է

վճռականապես վերջ տա հարբեցողու-  
թյանը և այլ՝ վոչ արտադրական ծախ-  
քերին:

7. Տնտեսության ռեժիմը անձնական  
կյանքում. սոցիալիստական կուտակում.  
աշխատավարձի հետագա անում:

Պետությունը հարկադրված է խոչոր  
միջոցներ ծախսել ժողովրդական տնտե-  
սության ընդարձակման վրա: Իրեն ան-  
հրաժեշտ միջոցները նա ստանում է ա-  
ռևտրից, արդյունագործությունից, գյու-  
ղական տնտեսությունից և ազգաբնակու-  
թյունից՝ հարկերի միջոցով, ստացված  
միջոցները բաշխելով տնտեսության ճյու-  
ղերի մեջ, համաձայն նրանց կարեորու-  
թյան:

Պետության միջոցների արագ կու-  
տակումը խիստ կապ ունի աշխատավոր  
աղդաբնակության մեջ յեղած կուտակու-  
մից և խիստ տնտեսական րեժիմից՝ անձ-  
նական կյանքում:

Կուտակելով իր միջոցները և նրանց  
պահ տալով խնայողական դրամարկեղնե-  
րում և պետական փոխառություններում,  
բանվորը ողնում է պետությանը մեծ գու-  
մարներ հատկացնելու ժողովրդական տըն-  
տեսության բարձրացման:

Աշխատավարձից խնայողություն առնելով և խնայողությամբ ձեռք բերելով բնակարան, հագուստ, վոտնաման, տընտեսական խոշոր կահույք, բանվորը դրանով իսկ նպաստում ե արդյունագործության բնդարձակման:

Աշխատավարձից խնայողություն առնելով և խնայած դրամը ուղարկելով գյուղ, իր գյուղական տնտեսության մեջ դորձադրելու, սեղոնային կառուցողը դրանով ոժանդակում ե գյուղական տընտեսության բարվոքման և զարգացման:

Այստեղից յերկում ե, վոր անձնական կյանքում և անձնական խնայողությամբ տնտեսած յուրաքանչուր կոպեկը ոժանդակում ե սոցիալիստական կուտակման, արագացնում ե յերկրի ժողովրդական տնտեսության աճումը:

Դա ունի նաև մի այլ նշանակություն: ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության և ժողովրդական հարստության աճումը հընարավորություն են տալիս պետությանը ավելի միջոցներ ծախսել աշխատավարձի բարձրացման, աշխատավորների բնականային, կենցաղային և կուլտուրական կարիքների բարվոքման վրա:

Այդպէսով տնտեսական բեժիմը անձնական կյանքում, արագացնելով սոցիա-

լիստական կուտակումը, արագացնում ե ժողովրդական հարստության աճումը, իսկ դրանով ավելի հնարավորություն և սուեղծվում աշխատավարձի աճման:

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒԽՑՆԵՐ

Այս զբույցում խմբակի ղեկավարը պետք է, յելնելով իրական աշխատավարձը բարձրացնելու ընդհանուր հարցից՝ բանվոլական բյուջեյի վերլուծման միջոցով՝ հասնի վերջնական յեղբակացության, այն ե՝ ի՞նչ կապ ունի սոցիալիստական կուտակումը անձնական կյանքում յեղած խնայողության հետ, ինչ կապ կա աշխատավարձի հետագա աճման և սոցիալիստական կուտակման մեջ:

Անցյալ զբույցի հետ համեմատած, այս զբույցի մեծ մասի վերացական լինելը կարենը են դարձնում, վորպեսզի ղեկավարը տեղական իրականությունից միշտ շարք փաստեր և թվեր հավաքի: Ամենից առաջ անհրաժեշտ ե հավաքել, վորպես լրացում նորմալ արժեքի աճման տվյալների (տես 1 և 2 զբույցները), տվյալներ վերջին տարիներում բյուջետային կուտակի արժեքի փոփոխության մասին, վորպեսզի դուրս բերվի իրական աշխատավարձի կրած փոփոխությունները:

Խոսելով կոռակերացիայի շահագետության մասին, հարկ կլինի բերել կոռակերացիայի և մասնավոր առևտրի գների իրապես գոյություն ունեցող հարաբերությունը:

Բանվորական բյուջեյի հարցի վերաբերյալ, ցանկալի յէ նախորոք, մի քանի սեղոնայինների հարց ու փորձի յենթարկելու միջոցով, հավաքել տվյալներ այն մասին, թե ինչպես են ծախսում նրանք իրենց աշխատավարձը, վորքան են գյուղուղարկում, վորքան են ծախսում սննդի, բնակարանի, հագուստի և վոտնամանի, կուլտուրական կարիքների վրա, վորքան ե ծախսվում վոգելից խմիչքների համար և այլն:

Խոսելով աշխատանքի արտադրողականության և նման յերեսութների ունեցած ազգեցության մասին, ոգտակար և հաշիվ անել, թե ի՞նչ ե արժենում՝ դա բակվորին՝ վորքան ե ծախսվում խմիչքի վրա և վորքան ե կորչում խուսափումների հետեւանքով և ինչ կարելի յեր ձեռք բերել այդ դրամով:

Այս ձեռով պարզաբանված բոլոր տվյալները, բացի խմբակի աշխատանքն աշխատացնելուց, ոգտակար նյութ կհանդիսանա նաև միութենական աշխատանքի

համար, վորովհետեւ, դժբաղդաբար, կառուցողի բյուջեյի շատ կարևոր տվյալներ մեր միությունը համարյա չունի:


Գրականություն իմբակայինների և դեկավարների համար:

Արհեստական գրագիտության ձեռնարկ—հրատարակություն ՀԱՄԿԽ-ի կուլտուրաժնի, պրակ I, եջ 109, 113, 172-175, 177-183:





ՀՀ Ազգային գրադարան



NL0192960

24

Aug 2